ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.02.2022թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/27

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հ. Օհանյանի (լիազորագիր՝ տրված 31.01.2022թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 25.01.2022թ. թիվ 26/26-1/1299-2022 գրությամբ «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 18.01.2022թ. թիվ 08.1//974-2022

գրության հիման վրա, 25.01.2022թ. թիվ 26/26-1/1299-2022 գրությամբ նախաձեռնել է «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Տեխնո Սիթի» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Գործի նախապատմությունը.

21.12.2021.-ին ՀՀ կրթության գիտության մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու) հայտարարել է թիվ ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-22/20 ծածկագրով էլեկտրոնային աճուրդը (այսուհետ՝ Աճուրդ): Աճուրդի 1-ին չափաբաժնով նախատեսվում էր ձեռքբերել ծածկոցով ըմբշամարտի գորգեր (այսուհետ՝ Գնման առարկա): Տեխնո Սիթի ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) Աճուրդի 1-ին չափաբաժնով ներկայացրել է հայտ, հայտով առաջարկվող Գնման առարկայի տեխնիկական բնութագիրը նույնությամբ կրկնում էր Աճուրդի հրավերով սահմանվածը սակայն Ընկերության կողմից ներկայացված Գնման առարկայի տեխնիկական բնութագիրը Պատվիրատուն գնահատել է անբավարար և ներրկայացրել է շտկման: Շտկման ծանուցումը Ընկերության էլեկտրոնային փոստին չի ուղարկվել, որպիսի հանգամանքներում Ընկերությունը ժամանակին և պատշաճ չի ծանուցվել հայտը անբավարար գնահատվելու և շտկում պահանջելու Պատվիրատուի որոշման վերաբերյալ: Արդյունքում Պատվիրատուն Ընկերության հայտը գնահատել է անբավարար և մերժել է:

Բողոքի համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

Ընկերությունը մասնակցել է Աճուրդին և 1-ին չափաբաժնի մասով ներկայացրել է: Հայտով առաջարկված ապրանքի տեխնիկական բնութագիրը նույնությամբ կրկնում էր հրավերով սահմանվածը (համեմատականը ներկայացված է ստորև), սակայն Պատվիրատուն 11.01.2022թ.-ին կայացված որոշմամբ Ընկերության կողմից առաջարկված ապրանքի տեխնիկական բնութագիրը գնահատել է անբավարար և նույն օրը կայացրել է մեկ այլ որոշում, որով որոշել է գնման գործընթացը մեկ աշխատանքային օրով կասեցնել և առաջարկել Ընկերությանը այդ ժամանակահատվածում հայտը շտկել:

Հրավերով սահմանված տեխնիկական բնութագիր	Հայտով ներկայացված տեխնիակական բնութագիր
Մրցումային ըմբշամարտի համաշխարհային միջազգային նորմերին համապատասխան եռագույն ըմբշամարտի գորգ լրակազմ: Ծածկոցը բարձր որակի ՊՎԽ (պոլիվինիլխլորիդ) 650գ/մ2 12.30մX12.30մ, շրջանագծերը 9մ շառավիղով 1մ հաստությամբ և 1մ շառավիղով 10սմ հաստությամբ: Ծածկոցի նյութը իրար է ամրացվելու զոդման(ջերմակցման) եղանակով,եզրերը ամբողջությամբ որակյալ կպչուն ժապավենով : Ըմբշամարտի ներքնակները ՊՊԵ պենոպոլիէթիլեն խտությունը 33կգ/մ3, երկարությունը 2մ, լայնությունը 1մ ,բարձրությունը 6սմ, 72հատ կամ 144մ2 ծածկոցի և ներքնակների եզրերը ամրացվում են կպչուն ժապավենով 20 սմ լայնությամբ դառնալով մեկ մարմին: Ապրանքը պետք է լինի նոր և չօգտագործված: Ապրանքների փոխադրումը և բեռնաթափումը իրականացվում է կատարողի կողմից:Պայմանագրի կատարման փուլում ներկայացվում է ապրանքի համապատասխանության սերտիֆիկատ	Մրցումային ըմբշամարտի համաշխարհային միջազգային նորմերին համապատասխան եռագույն ըմբշամարտի գորգ լրակազմ: Ծածկոցը բարձր որակի ՊՎԽ (պոլիվինիլխլորիդ) 650գ/մ2 12.30մX12.30մ, շրջանագծերը 9մ շառավիղով 1մ հաստությամբ և 1մ շառավիղով 10սմ հաստությամբ: Ծածկոցի նյութը իրար է ամրացվելու զոդման (ջերմակցման) եղանակով, եզրերը ամբողջությամբ որակյալ կպչուն ժապավենով: Ըմբշամարտի ներքնակները ՊՊԵ պենոպոլիէթիլեն խտությունը 33կգ/մ3, երկարությունը 2մ, լայնությունը 1մ ,բարձրությունը 6սմ, 72հատ կամ 144մ2 ծածկոցի և ներքնակների եզրերը ամրացվում են կպչուն ժապավենով 20 սմ լայնությամբ դառնալով մեկ մարմին: Ապրանքը պետք է լինի նոր և չօգտագործված: Ապրանքների փոխադրումը և բեռնաթափումը իրականացվում է կատարողի կողմից:Պայմանագրի կատարման փուլում ներկայացվում է ապրանքի համապատասխանության սերտիֆիկատ

Ընկերությունը հայտը շտկելու վերաբերյալ ծանուցումը էլեկտրոնային փոստին չի ստացել:

Բողոքի հիմքերն ու հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը:

Նշյալից հետևում է, որ հրավերով սահմանված պայմաններին բավարարող հայտերը ենթակա չեն մերժման և պետք է գնահատվեն բավարար: Սույն գործի փաստական հանգամանքներից երևում է, որ Ընկերության կողմից հայտով առաջարկված ապրանքի տեխնիկական բնութագիրը նույնությամբ կրկնում է հրավերով սահմանված Գնման առարկայի տեխնիկական բնութագիրը, ուստի պետք է արձանագրել, որ Ընկերության ներկայացրած տեխնիկական բնութագիրը համապատասխանում է հրավերով սահմանվածին, հետևաբար այն հրավերով սահմանված պայմաններին չհամապատասխանելու պատճառաբանությամբ մերժման ենթակա չէր: Նշյալից հետևում

է, որ Ընկերության հայտը պետք է գնահատվեր բավարար և չմերժվեր, որպիսի հանգամանքներում սույն ընթացակարգը նույնպես պետք է չնախաձեռնվեր:

Բացի այդ, Ընկերությունը իր էլեկտրոնային փոստի հասցեին չի ստացել հայտը շտկելու վերաբերյալ ծանուցումը, այդ իսկ պատճառով զրկված է եղել հայտը անբավարար գնահատելու օրվան հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում ծանուցմանը արձագանքելու հնարավորությունից: Հարկ է նշել որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18 թիվ 534-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստաված կարգի 10-րդ կետի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 32-րդ կետի 11-րդ ենթակետի բովանդակությունից հետևում է, որ էլեկտրոնային աճուրդի համակարգով իրականացվող գնման ընթացակարգերի վերաբերյալ ծանուցումները, որպիսին է նաև հայտը շտկելու վերաբերյալ ծնուցումը, իրականացվում են ծանուցումը էլեկտրոնային փաստին ուղարկելու միջոցով: Ելնելով նշյալից կարող ենք փաստել, որ Ընկերությունը հայտը շտկելու վերաբերյալ պատշաճ չի ծանուցվել, հետևաբար ծանուցված չլինելու պայմաններում Ընկերությունը զրկված է եղել հայտը շտկելու վերաբերյալ ծանուցմանը ժամանակին արձագանքելու հնարավորությունից, ուստի կարծում ենք, որ նման հանգամանքներում սույն ընթացակարգը անհրաժեշտ է մերժել:

Պահանջը

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 50-րդ հոդվածով և Կարգի 2-րդ կետով՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք ամբողջությամբ մերժել ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված՝ ՍՑ-ՆԳ-2022/27 ծածկագրով ընթացակարգը»:

«Տեխնո Սիթի» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/27 ընթացակարգի շրջանակներում 02.02.2022թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերը շարադրված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 18.01.2022թ. թիվ 08.1//974-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ էլեկտրոնային աճուրդով «ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-22/20» ծածկագրով կազմակերպված մարզական գույքի գնման գործընթացին հայտ է ներկայացրել «ՏԵԽՆՈ ՍԻԹԻ» ՍՊԸ-ն, որը ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով eauction.armeps.am համակարգի կողմից ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Հաշվի առնելով, որ մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գնահատման գործընթացը կասեցվել է և 2022 թվականի հունվարի 11-ին առաջարկվել է «ՏԵԽՆՈ ՍԻԹԻ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, սակայն դրանք չեն շտկվել և վերջինիս հայտը մերժվել է:

Ելնելով վերոգրյալից՝ ստորև ներկայացնում եմ «ՏԵԽՆՈ ՍԻԹԻ» ՍՊԸ-ի վերաբերյալ տվյալները և համապատասխան հիմքերը գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/27 ընթացակարգի շրջանակներում 02.02.2022թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/27 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/27 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կարիքների համար մարզական գույքի (ծածկոցով ըմբշամարտի գորգեր, ծանրաձողեր) ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-22/20» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի Հավելված 1.1-ով՝ Տեխնիկական բնութագրով, 1-ին չափաբաժնով նախատեսված «Ծածկոցով ըմբշամարտի գորգեր» գնման առարկայի սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

Հ/Հ	Ամբողջական անվանումը	Տեխնիկական բնութագիրը
1	ծածկոցով ըմբշամարտի գորգեր	Մրցումային միջազգային նորմերին համապատասխան եռագույն ըմբշամարտի գորգ լրակազմ: Ծածկոցը բարձր որակի ՊՎԽ(պոլիվինիլխլորիդ)650գրամ 12.30մX12.30մ, շրջանագծերը 9մ շառավիղով 1մ հաստությամբ և 1մ շառավիղով 10սմ հաստությամբ: Ծածկոցի նյութը իրար է ամրացվելու զոդման(ջերմակցման) եղանակով,եզրերը ամբողջությամբ որակյալ կպչուն ժապավենով : Ըմբշամարտի ներքնակները ՊՊԵ պենոպոլիէթիլեն խտությունը 200-220կգ/մ2, երկարությունը 2մ, լայնությունը 1մ, բարձրությունը 7սմ, 72հատ կամ 144մ2 ծածկոցի և ներքնակների եզրերը ամրացվում են կպչուն ժապավենով 20 սմ լայնությամբ դառնալով մեկ մարմին: Ապրանքը պետք է լինի նոր և չօգտագործված: Ապրանքների փոխադրումը և բեռնաթափումը իրականացվում է կատարողի կողմից:Պայմանագրի կատարման փուլում ներկայացվում է ապրանքի համապատասխանության սերտիֆիկատ

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.01.2022թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ արձանագրվել է, որ Ընկերության կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով «Էդալտ Գրուպպ» ֆիրմային անվամբ ներկայացված գորգը չի հանդիսանում ըմբշամարտի համաշխարհային միջազգային նորմերին համապատասխան մրցումային գորգ:

4. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել նիստը կասեցնելու վերաբերյալ՝ առաջարկելով Ընկերությանը մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Ընկերության հայտը գնահատել է անբավարար և մերժել, այն հիմնավորմամբ, որ Ընկերությունը սահմանված ժամկետում չի շտկել գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 25.01.2022թ. թիվ 26/26-1/1299-2022

գրությունը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 18.01.2022թ. թիվ 08.1//974-2022 գրությունը՝ կից փաստաթղթերով, ինչպես նաև «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ

մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: ***Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին...:***

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում ***մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ <u>հրավերի պահանջների նկատմամբ</u>*** ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Կարգի 43-րդ կետի 1-ին ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստի ***<u>արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխանությունները և դրանցով պայմանավորված հայտերի</u>*** մերժման հիմքեր:

Այսպես, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կարիքների համար մարզական գույքի (ծածկոցով ըմբշամարտի գորգեր, ծանրաձողեր) ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-22/20» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.01.2022թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ արձանագրվել է, որ Ընկերության կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով «Էդալտ Գրուպպ» ֆիրմային անվամբ ներկայացված գորգը չի հանդիսանում ըմբշամարտի համաշխարհային միջազգային նորմերին համապատասխան մրցումային գորգ:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել նիստը կասեցնելու վերաբերյալ՝ առաջարկելով Ընկերությանը մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Ընկերության հայտը գնահատել է անբավարար և մերժել, այն հիմնավորմամբ, որ Ընկերությունը սահմանված ժամկետում չի շտկել գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունը:

Այսպիսով՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.01.2022թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի հայտում արձանագրվել է անհամապատասխանություն, այն է՝ ***<u>Ընկերության կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով «Էդալտ Գրուպպ» ֆիրմային անվամբ ներկայացված գորգը չի հանդիսանում ըմբշամարտի համաշխարհային միջազգային նորմերին համապատասխան մրցումային գորգ</u>***, վերոնշվածի վերաբերյալ հարկ եմ համարում արձանագրել, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունն ընդհանրական է, մասնավորապես չի նշվել, թե Ընկերության հայտով ներկայացրած առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի որ հատկանիշը չի բավարարում Ընթացակարգի հրավերի 1-ին չափաբաժնով սահմանված

գնման առարկայի համար պահանջվող տեխնիկական հատկանիշներին, այլ միայն նշվել է, որ «Էդալտ Գրուպպ» ֆիրմային անվամբ ներկայացված գորգը չի հանդիսանում ըմբշամարտի համաշխարհային միջազգային նորմերին համապատասխան մրցումային գորգ, առկա չէ որևէ հիմնավորում, թե Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ինչ տվյալների և փաստերի վրա է հիմնվել արձանագրելով անհամապատասխանություն, որի չշտկման արդյունքում Ընկերության հայտը մերժվել է, նման պայմաններում գտնում եմ, որ հնարավոր չէ արձանագրել որպես հետևանք Ընկերության հայտի մերժման իրավաչափությունը:

Վերոնշվածի հաշվառմամբ գտնում եմ, որ որոշմամբ արձանագրված Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունների արդյունքում առաջացած բացասական հետևանքները չեն կարող մեկնաբանվել ի վնաս Ընկերության և հանգեցնել վերջինիս նկատմամբ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման հիմքով պատասխանատվության միջոցի կիրառմանն, այն է՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Վերոգրյալի հաշվառմամբ և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 25.01.2022թ. թիվ 26/26-1/1299-2022 գրությամբ «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**